ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ[1]

ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՂՈՍՅԱՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, ՀՀ, Իջևան

Էլ հասցե՝ *vladimir.pogosyan@ysu.am*

DOI: 10.24234/scientific.v3i53.399

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում է հայոց բարեգործական ավանդույթների ձևավորումը և զարգացումը՝ միջնադարից մինչև 19-րդ դարավերջը՝ Պիեռ Բուրդիեի «խորհրդանշական կապիտալի» և Ռոբերտ Փաթնամի «սոցիալական կապիտալի» տեսությունների համադրված շրջանակներում: Որպես առաջնահերթություն դիտարկվում է բարեգործության ինստիտուցիոնալացման առանձնահատկությունները և կազմակերպական կառույցների անցման շարժառիթները: Նպատակն է բացահայտել բարեգործական զարգացման փուլերը, շարժառիթները և երկակի գործառույթը՝ մի կողմից ազգային համերաշխության ամրապնդում, մյուս կողմից սոցիալական տարբերակման վերարտադրություն:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ հայոց բարեգործական ավանդույթներն անցել են չորս հիմնական փուլ՝ վաղ միջնադարյան եկեղեցակենտրոն բարեգործություն, զարգացած միջնադարյան անհատական-առաքինական բարեգործություն, 16-18-րդ դարերի գաղթահայ վաճառականության եկեղեցանպաստ և կրթագիտական հովանավորչություն և 19-րդ դարի ինստիտուցիոնալացված ընկերություններ (Կովկասի Հայոց բարեգործական ընկերություն և այլն): Բարեգործությունը միաժամանակ ծառայել է որպես ազգային մոբիլիզացիայի գործիք է պետականության բացակայության պայմաններում և որպես տնտեսական կապիտալի վերածման մեխանիզմ խորհրդանշական կապիտալի՝ ամրապնդելով բարերարների սոցիալական դերակատարությունը:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ բարեգործությունը հայոց մեջ ոչ միայն եղել է զուտ անշահախնդիր նպատակադրում, այլ գործել է

[1] *Հետազոտությունն իրականացվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆինանսական աջակցությամբ՝ «Կովկասի հայոց բարեգործական ընկերության գործունեությունը Ղազախի գավառում 1900-1910-ական թվականներին» վերնագրով թեմայի շրջանակներում:*

իշխանության, ռեսուրսների և սոցիալական ազդեցության վերարտադրման համատեքստում՝ միաժամանակ նպաստելով հայ կրթական և մշակութային միջավայրի զարգացմանը:

Բանալի բառեր՝ *Կովկասի Հայոց բարեգործական ընկերություն, բարեգործություն, խորհրդանշական կապիտալ, ազգային ինքնություն, հայ վաճառականություն, գաղթահայություն, ինստիտուցիոնալացում:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ իրականությունը, իր բազմադարյա փորձառության ընթացքում կրելով արտաքին և ներքին մարտահրավերներին պատասխանելու բազմաչափ մոտեցումը, ձևավորել և զարգացրել է հանրային միջավայրի բարելավման, հասարակական կարիքներն ու մտահոգությունները բավարարող սոցիալական փոխօգնության անհատական կամ կազմակերպական աջակցության մեխանիզմներ, որոնք 19-րդ դարում վերածվեցին կազմակերպական կառույցների, որոնց առջև ծառացած էին հայության հավաքական խնդիրները լուծելու և հընթացս հնարավոր ռիսկերը գնահատելու մարտահրավերներ:

Հետազոտության շրջանակներում փորձել ենք պատասխանել հետևյալ հիմնահարցերին՝ ինչպե՞ս են ձևավորվել և զարգացել հայոց բարեգործական ավանդույթները՝ սկսյալ միջնադարից մինչև 19-րդ դարավերջ, որո՞նք էին դրանց շարժառիթները տարբեր ժամանակաշրջաններում և ինչպի՞սի ազդեցություն են ունեցել բարեգործական առաքելությունները՝ մի կողմից ազգային համերաշխության ամրապնդման, մյուս կողմից սոցիալական հիերարխայի վերարտադրության տեսքով:

Հետազոտության նպատակն է միջգիտակարգային մոտեցմամբ համապարփակ փորձ կատարել ուսումնասիրելու հայոց բարեգործական ավանդույթների դարավոր պրիզման, գործունեության առանձնահատկություններն ու շարժառիթները: Այս նպատակին հասնելու համար մեր առջև խնդիր ենք դրել՝ ա, վերլուծել բարեգործական ավանդույթների ձևավորման պատմական նախադրյալները, բ, բացահայտել բարեգործության կրոնական և սոցիալական բնույթի առանձնահատկությունները միջնադարում և նոր ժամանակներում, գ, վերլուծել արևմտահայ և արևելահայ միջավայրերում բարեգործական ընկերությունների ինստիտուցիոնալացման գործընթացը և դիտարկել Կովկասի Հայոց Բարեգործական ընկերության գործունեությունը որպես դրա օրինակ: Հետազոտությունը հիմնված է առաջնային սկզբնաղբյուրների, տեսական և հետազոտական գրականության ուսումնասիրության վրա:

Սույն ուսումնասիրության նորույթը կայանում է նրանում, որ հայոց բարեգործական ավանդույթներն առաջին անգամ դիտարկվում են տեսական շրջանակում, ինչը հնարավոր է դարձնում բացահայտելու բարեգործության երկակի գործառույթը՝ մի կողմից ազգային համերաշխության և մշակութային ինքնության

ամրապնդման միջոց, մյուս կողմից՝ ազդեցիկ անձանց և խմբերի կողմից տնտեսական կապիտալի վերածումը խորհրդանշական կապիտալի և սոցիալական հիերարխիայի վերարտադրություն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայոց բարեգործական ավանդույթների ուսումնասիրությունը հիմնված է միջգիտակարգային մոտեցման վրա՝ համադրելով պատմական, սոցիոլոգիական և մշակութային վերլուծության մեթոդները, ինչը պայմանավորված է բարեգործության՝ որպես խնդրի հետազոտության բարդությամբ և բազմաշերտությամբ: Վերոնշյալ ավանդույթները՝ որպես սոցիալական, մշակութային, տնտեսական և քաղաքական երևույթ, չեն կարող ամբողջությամբ բացահայտվել մեկ գիտակարգի շրջանակներում, հետևաբար անհրաժեշտություն է առաջացել տարբեր մեթոդների և մոտեցումների համակարգված կիրառումը: Այդու՝ հետազոտության շրջանակում համադրվել են պատմագիտական, սոցիոլոգիական և մշակութային վերլուծության մեթոդները:

Պատմա-համեմատական մեթոդի կիրառման միջոցով իրականացվել է բարեգործական ավանդույթների զարգացման փուլերի վերլուծությունը, դրանց ձևերի, նպատակների և շարժառիթների փոխակերպման առանձնահատկությունները տարբեր դարաշրջաններում:

Բովանդակային կամ կոնտենտ վերլուծության մեթոդը կիրառվել է պատմական սկզբնաղբյուրների, վիմագրական արձանագրությունների, բարեգործական կանոնադրությունների, մամուլի հրապարակումների և հրապարակախոսական նյութերի վերլուծության համար, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու բարեգործության շարժառիթ-նպատակները, ակնկալիքները, որոնք ուղղակիորեն արտահայտված են աղբյուրներում:

Ինչ վերաբերում է տեսական վերլուծության մեթոդներին, այստեղ օգնության է գալիս Պ. Բուրդիեի «խորհրդանշական կապիտալի» և Փաթնամի «սոցիալական կապիտալի» հայեցակարգերը՝ հայոց բարեգործական ավանդույթների շարժառիթների և սոցիալական ազդեցության բացահայտման համար: Այս մեթոդը հնարավորություն է տալիս դուրս գալ զուտ նկարագրական պատմագրության շրջանակից և բացահայտելու բարեգործության խորքային սոցիալական մեխանիզմները:

Կիրառվել է նաև ինստիտուցիոնալ մեթոդը՝ կանոնադրությունների, կազմակերպական մարմինների ձևավորման առանձնահատկությունները ուսումնասիրելու համար:

Պետք է նաև նշել, որ ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ աղբյուրները սակավաթիվ են, հատկապես միջնադարյան, և ամբողջական պատկեր ձևավորելու համար շատ հաճախ փորձում են հիմնվել դիտարկումների և հավանական զարգացման սցենարների վրա: Ընդգծենք նաև, որ ուսումնասիրությունը

կենտրոնացած է բարեգործության շարժառիթների և ինստիտուցիոնալացման վրա, ուստի դիտավորյալ դուրս են մնացել քանակական տվյալների բացակայությունը, գենդերային և համեմատական ասպեկտները, տնտեսական վերլուծությունը, ժամանակակից շրջանը և ազդեցության գնահատումը: Այս բացերը չեն նվազեցնում աշխատության արժեքը, այլ ցույց են տալիս հետագա հետազոտության ուղղություններ, որոնց ամբողջական ընդգրկումը կպահանջեր առանձին մասնագիտացված ուսումնասիրություններ՝ իրենց մեթոդաբանական և ծավալային առանձնահատկություններով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ժամանակակից հասարակագիտության շրջանակներում, հատկապես Ռոբերտ Փաթնամի «սոցիալական կապիտալի» հայեցակարգի ներդրմամբ (Putnam, 2000, p. 19), կամավոր միավորները և բարեգործական կազմակերպությունները դիտվում են որպես քաղաքացիական հասարակության հենասյուներ, որոնք ամրապնդում են հասարակական վստահությունը, ձևավորում փոխօգնության ցանցեր, կամրջում հասարակության տարբեր սոցիալական շերտերի ներդաշնակեցման կապերը և այլն: Հայոց բարեգործական ավանդույթների կազմակերպական և կանոնադրական փուլը սկսվում է 19-րդ դարից, քանի որ այդ կազմակերպությունները գործում էին որպես ինքնակազմակերպված քաղաքացիական կառույցներ՝ պետականության բացակայության պայմաններում փոխարինելով պետական սոցիալական ինստիտուտներին:

Ի տարբերություն Փաթնամի մոտեցման, որը սոցիալական կապիտալը դիտարկում է որպես համերաշխության և սոցիալական շերտերի ներդաշնակության չափանիշ, Պ. Բուրդիեի տեսության շրջանակներում այն ընկալվում է որպես իշխանության ռեսուրս, որը ծառայում է սոցիալական տարբերությունների ամրապնդմանը և վերարտադրմանը (Bourdieu, 1986): Այս տեսանկյունից, հայոց բարեգործական ավանդույթները միջնադարում և կազմակերպական շրջանում ոչ միայն համայնքային կարիքներ էին բավարարում, այլև ազդեցիկ խմբերի (խոջաների, մտավորականների, հոգևորականության) համար հարթակ էին հանդիսանում իրենց դիրքերն ամրապնդելու և «խորհրդանշական կապիտալ» կուտակելու համար: Բուրդիեի տեսության համադրությամբ «խորհրդանշական կապիտալ»-ի փոխակերպումն առավել ակնհայտ է դառնում 16-18-րդ դարերի գաղթահայ վաճառականության շրջանում, երբ եկեղեցանպաստ և կրթագիտական հովանավորչությունը դառնում է բարեգործության գերակայող ուղղություն, իսկ արդեն 19-րդ դարում այն ինստիտուցիոնալացվում է տարբեր բարեգործական կազմակերպությունների կանոնադրական գործունեությամբ (Bourdieu, 1984): Այս շրջանից սկսած բարեգործության գաղափարը ծառայում է որպես խորհրդանշական կապիտալի կուտակման հանրօգուտ ռազմավարություն՝ միաժամանակ

ամրապնդելով բարերարների սոցիալական գերակայություն, սակայն չժխտելով այդ կանոնադրական կազմակերպությունների բարերար ազդեցությունը հայ կրթական և մշակութային միջավայրի զարգացման գործում:

Հայոց բարեգործական ավանդույթների դիտարկումը հայագիտության մեջ ունի մի շարք առանձնահատկությունները, քանի որ այն դիտարկվում է ազգային մոբիլիզացիայի գործիք՝ հատկապես Օսմանյան և Ռուսական կայսրություններում ցրված հայության պայմաններում: Այս տեսանկյունից բարեգործական կազմակերպությունները ոչ միայն նյութական օգնություն էին ցուցաբերում, այլև ծառայում էին որպես ազգային գիտակցության, կրթության և մշակութային ինքնության պահպանման կառույցներ, մասնավորապես արևելահայության, արևմտահայության և գաղթականության հարցերում: Գաղթաշխարհի շրջանակներում ձևավորված «տրանսազգային ցանցերի» տեսությունը հնարավորություն է տալիս առևտրական ցանցերից կազմակերպական կառույցների զարգացումը հասցնել ժամանակակից կազմակերպական կառույցներ և հիմնադրամներ: Այդ մոտեցումը թույլ է տալիս ուսումնասիրել բարեգործական ավանդույթների զարգացումը կրոնական և առևտրական ցանցերից մինչև գաղթականության և սփյուռքի կազմակերպությունների վերլուծության համար:

Վերոնշյալ մոտեցումների և տեսական հիմնադրույթների համադրված կիրառումը հնարավորություն է տալիս հայոց բարեգործական ավանդույթները դիտարկել ոչ թե որպես մեկուսացված բարեգործական գործունեության հանրագումար, այլ որպես դինամիկ, պատմականորեն փոփոխվող ինստիտուցիոնալ երևույթ, որը յուրաքանչյուր դարաշրջանում կատարել է տարբեր՝ հոգևոր, հասարակական, ազգային և տնտեսական գործառույթներ:

Քրիստոնեական արժեհամակարգը, հասարակության անդամներին օժանդակելու և խնդիրները լուծելու համայնական մոդելը հայ իրականության մեջ ևս զարգացել է իր դարավոր փորձառությանը համընթաց: Պետականությունների գոյության, վարչակառավարչական համակարգի առկայության պարագայում բարեգործական ավանդույթները կրում էին հատվածական բնույթ կամ էլ կենտրոնանում էին հոգևոր կյանքի բարեշինության գաղափարի շուրջ: Ինչպես նշում է Լեոն՝ «քրիստոնէութեան թելադրած բարեգործական ոգին մեծ և ընդարձակ չափերով տարածվեց Հայաստանի մէջ Գրիգոր Լուսաւորչի շառաւիղներից մէկի՝ Ներսէս Մեծ ժամանակ, ... ահագին դեր էր կատարում և երկրի քաղաքական կեանիք մէջ, բաց արաւ Հայաստանում բազմաթիւ և տեսակ-տեսակ բարեգործական հաստատութիւններ, որոնք պահվում էին պետական միջոցներով» (Լէօ, 1911): Լեոյի գնահատմամբ նման պետություն, որտեղ սոցիալական բաղադրիչը գերակայում է արտաքին և ներքին պաշտպանության-հավասարակշռության վրա, չէր կարող պետական միջոցների «մի խոշոր մասը յատկացել բարեգործական հաստատութիւններին» (Լէօ, 1911), և այդ պատճառով Ներսես Մեծի

հաստատությունները ճիշտ այնքան կյանք ունեցան, որքան մեծ հայրապետը: Ինչպես նկատում ենք Լեոյի ընդգծումից, այնուհետև հայոց պատմության ընթացքում այլևս չենք տեսնում «պետական բարեգործութեան այսպիսի ընդարձակ սիստեմ» (Լէօ, 1911):

Իսկ հետագայում՝ պետականությունների բացակայությանը, հայության հավաքական խնդիրների լուծման ներազդեցության ձևաչափն ընդլայնվում է արտաքին մարտահրավերների՝ յուրաքանչյուր նոր տիրապետողի և տիրապետության համակարգի ազդեցության արդյունքում (Шагиданова, 2007): Այս գործընթացին առավել բնորոշ էր սոցիալական բարեգործության անհատականացում, որտեղ բարեգործությունը հանդես է գալիս ոչ թե որպես պետության սոցիալական քաղաքականության բաղադրիչ, այլ առանձին անհատների նախաձեռնություն, որի համար «նուիրաբերողներները վարձ պիտի ստանան թէ այս և թէ հանդերձեալ աշխարհում» (Լէօ, 1911): Եթե դիտարկենք հայոց պատմության միջնադարյան ընթացքը, ապա բարեգործ-նվիրատուների կերպարներում նկատում ենք անհատների, որոնք ունեն կարողություն և հնարավորություններ՝ ոչ միայն ավանդական ինստիտուտների (եկեղեցիներ, վանական տնտեսություն), այլև հասարակության կարիքները հոգալու հանձնառությամբ, բայց բարեգործությունը ամենից առաջ և ամենից շատ «կրօնական աստուածահաճոյ կերպարանք ունի» (Լէօ, 1911): Աստվածահաճո գործեր էին համարվում նաև հանրօգուտ ձեռնարկները՝ կամուրջ, աղբյուր կառուցելը, Անիի պարագայում պաշտպանական աշտարակների կառուցումը, ինչը ցույց է տալիս, որ հասարակության ինքնապաշտության նպաստելը ևս համարվում էր հոգեշահ բարեգործություն:

Հատկապես մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանի աղբյուրներում հանդիպում ենք անհատ բարեգործների անուններ և կերպարներ, որոնք ոչ միայն խոշոր ունեցվածքի տեր էին, այլև իրենց կարողությունից բաժին էին հանում հասարակությանը: Օրինակ Կիրակոս Գանձակեցին հիշատակում է երկու խոշոր բարեգործ վաճառականների, որոնք ոչ միայն ներկայացնում էին այս ժամանակաշրջանի բարեգործական ավանդույթների մասին, այլև հասարակության ներսում վերջիններիս ունեցած մեծ հեղինակության մասին: Անդրադառնալով խոշոր վաճառական Ումեկին՝ Գանձակեցին նշում, որ վերջինս «բարեգործ մարդ էր, որին երբեմն հիշատակեցինք, Կարս քաղաքի ավերման ժամանակ թաթարների կողմից Հովհաննես, Ստեփանոս որդիներով ու եղբայրներով ազատվեց» (Կիրակոս Գանձակեցի, 1982): Նույն անձի և նրա բարեկամաց տեղահանության մասին հիշատակում է նաև Վարդան Արևելցին, որի բնորոշմամբ Ումեկը «մեծատուն ու աստվածապաշտ երևելի» անձ էր, որի անձի նկատմամբ հոգևոր պատմագրության ներկայացուցիչների այսօրինակ վերաբերմունքը պայմանավորված էր նրա բարեգործական առաքելության լայն ընդգրկմամբ՝ ոչ միայն հասարակությանը, այլև հոգևոր կենտրոններին ու կրթական կենտրոններին:

Ումեկի և նրա ժառանգների՝ Ճարի և այլոց անունները հիշատակվում են տարբեր վիմագրական արձանագրություններում, որոնցից հատկապես ուշագրավ է Գոշավանքի արձանագրությունը, որտեղ հստակեցվում է բարեգործ-նվիրատուների նվիրատվության ժամանակի պայմանները՝ «ի դառն ժամանակի, որ հայրենիքն արժան էր,եւ ոսկին թանգի» (Դիվան, 1977): Ումեկի, նրա ժառանգների և, ընդհանրապես, հայոց բարեգործական ավանդույթների մասին կարելի է միայն եզրակացնել միջնադարյան բազմաթիվ արձանագրությունների և հիշատակարանային նյութի վերլուծությունից, որտեղ հստակորեն ամրագրված են բարեգործության նպատակներն ու ակնկալիքները՝ ի բարօրության ապրողաց, «մեղաց թողութիւն» (Դիվան, 1977), «ի հոգո փրկութեան» (Դիվան, 1977):

Մոնղոլական շրջանում չնայած հատվածական բարեգործության դրսևորումներին ձևավորված մոնղոլական տիրապետության համակարգը ոչ միայն տնտեսապես, այլև ինստիտուցիոնալ առումով կազմաքանդեց հայության ինքնակազմակերպման սոցիալական հենքը, որի գլխավոր ցուցիչներից մեկը ազնվականության դիրքերի նվազումը կամ իսպառ վերացումն էր: Այլևս հասարակական ասպարեզում հայանպաստ գործընթացների մղող ուժ հանդիսանում էր Հայ առաքելական եկեղեցին և հատվածական փոքր իշխանություններ: Սակայն ժամանակի ընթացքում, ինչպես նշում է Լեոն, «կեանքը թաթարական տիրապետողների իշխանութեան տակ մշակում է նոր ձևեր: Եվ առաջանում է մեր Նոր պատմութեան ամենախոշոր երևոյթը՝ հայ վաճառականութիւնը» (Լէօ, 1911): Այսպիսով, միջնադարյան բարեգործությունը, չնայած իր ակնհայտ կրոնական բնույթին, միաժամանակ ամրապնդում էր բարերարների սոցիալական դիրքերը՝ նրանց ներկայացնելով որպես «մեծատուն և աստվածապաշտ երևելի» անձինք:

Վաճառականության դասը, որը կարողանում էր հարաբերվել արևմտյան զարգացած աշխարհի հետ, գաղթավայրեր էր հիմնել Եվրոպայի և Ասիայի զանազան կողմերում, ըստ էության, զբաղեցնում է ազնվականության տեղը և սկսում կատարել նրա գործառույթները: Բարեգործական առաքելությունը կրկին վերակենդանանում է հայոց մեջ և նրա նպատակը «գլխաւորապես միևնոյնն է մնում՝ կրօնական հաստատութիւններին օժանդակել և նրանց միջոցով նաև աղքատներ խնամել» (Լէօ, 1911): Ոչ միայն փոխակերպվում է հայ վաճառականության գործունեության աշխարհագրությունն ու տնտեսական հնարավորությունները, այլև փոխակերպվում է նրանց սոցիալական պատասխանատվության վարքագիծը՝ նոր շերտեր մտցնելով բարեգործական գործունեության մեջ:

Լինելով տնտեսապես և տեխնե մտածողության առաջատար երկրների հետ շփումներ ունեցող առաջադեմ անհատներ՝ խոջայական կապիտալի ներկայացուցիչները նպաստում էին ոչ միայն սոցիալական խնդիրների լուծման, այլև գիտատեխնիկական առաջընթացին հայությանը ևս մասնակից դարձնելու գործին՝ զարգացնելով տվյալ ժամանակներին բնորոշ նորամուծությունները՝ գրատպությունը,

նոր ժամանակների կրթական հաստատությունների գործունեությունը (Լեօ, 1934): Սկսած 17-18-րդ դարերից հայոց մեջ բարեգործության հիմնական ուղղությունն են դառնում եկեղեցանպաստ և կրթագիտական գործունեության հովանավորչությունը: Բազմաթիվ են տարբեր գաղթավայրերից և բուն հայրենիքի մեծահարուստների կտակները, որոնցում բավականին մեծ գումարներ են նվիրաբերվում Մայր աթոռին, Վենետիկի Մխիթարյաններին՝ կրթական և գիտահրատարակչական գործունեության զարգացման համար (Լէօ, 1911):

Վաճառականության դասի բարեգործական գործունեությունը, Բուրդիեի տեսանկյունից, տնտեսական կապիտալի փոխակերպման դասական օրինակ էր. առևտրից ձեռք բերված հարստությունը, որը միջնադարյան արժեհամակարգում համարվում էր «պակաս արժանավոր», քան ժառանգական ազնվականությունը, բարեգործության միջոցով վերածվում էր խորհրդանշական կապիտալի (հեղինակություն, պատիվ, եկեղեցական և համայնքային ճանաչում): Այս փոխակերպումը թույլ էր տալիս վաճառականներին ոչ միայն ամրապնդել իրենց դիրքերը հայ համայնքում, այլև ձեռք բերել հեղինակություն օտար սոցիալական դաշտերում, ինչը նպաստում էր նրանց առևտրային հաջողություններին:

16-18-րդ դարերի գաղթահայ վաճառականության շրջանում բարեգործությունը ձեռք բերեց նոր որակական հատկանիշներ. այն դարձավ «տրանսազգային» երևույթ, որտեղ խորհրդանշական կապիտալը կուտակվում էր ոչ միայն հայ, այլև օտար սոցիալական դաշտերում: Այս շրջանում ձևավորվեցին բարեգործական ավանդույթների այն մեխանիզմները (կտակներ, հովանավորչություն), որոնք հետագայում՝ արդեն 19-րդ դարում ձեռք բերեցին ինստիտուցիոնալ բնույթ:

Անհատական բարեգործությունից դեպի կազմակերպական անցումը հայոց մեջ տեղի ունեցավ բավականին ուշ շրջանում ՝ 19-րդ դարի առաջին տասնամյակում, Կոստանդնուպոլսում, որտեղ Ղուկաս Ինճիճյանի նախաձեռնությամբ և հորդորներով՝ «Տյուզեան ամիրայական ընտանիքի երկու երիտասարդ անդամներ կազմակերպում են «Արշարունեաց» անունով մի ընկերութիւն, որի նպատակն էր հանրամատչելի հրատարակութիւններ անել»[2] (Լէօ, 1911): Հետագա տասնամյակներում Կոստանդնուպոլսում և Զմյուռնիայում հիմնվեցին մի շարք, մասնավոր ընկերություններ, որոնց առաջնային խնդիրն էր պահպանել այս կամ այն դպրոցը, ընթերցարանը կամ հրատարակչությունը: Արևմտահայոց մեջ բարեգործական ընկերությունների գործունեությունը ավելի լայն ընթացք ստացավ 1860-ական թվականներին, երբ հիմնադրվեց «Բարեգործական Ընկերություն

[2] 1812 թվականի օգոստոսին «Արշարունեաց» ընկերության միջոցներով սկսվում է «Դիտակ Բիւզանդեան» երկշաբաթաթերթի հրատարակությունը, որն առաջին աշխարհաբար հրատարակությունն էր հայոց մեջ:

Հայոց»-ը, որի նախաձեռնությունը պատկանում էր արևմտահայ նշանավոր գրական-հասարակական գործիչներին:

Մինչ արևմտահայության մեջ բարեգործական ընկերությունները սկսեցին ձևավորվել 1860-ական թվականներից, արևելահայության մեջ այդ գործընթացը զարգացավ ավելի ուշ՝ կապված քաղաքական համակարգի կայացման և հայկական կապիտալի ի հայտ գալու հետ: Սկզբնական շրջանում ևս դրանք հատվածական, մասնավոր ընկերություններ ունեին, որոնք ունեին մակրոնպատակ և տեղային լուծումներ: Արևելահայ հասարակական մտքում ձևավորվեց բարեգործության՝ որպես հասարակական նախաձեռնության դրդապատճառները՝ որպես «հասարակական խնամարկութեան լիակատար արտահայտութիւն» (Բուդաղեան, 1901): Արևելահայ բժիշկ, հասարակական գործիչ Արտաշես Բուդուղյանն իր բժշկագիտական և հրապարակախոսական աշխատանքներում կարևորում է բարեգործության անհրաժեշտությունը՝ որպես հասարակական համերաշխության և յուրաքանչյուրի ներդրման դրսևորում: Ըստ հեղինակի «բարեգործութիւնը պէտք է նպաստէ տէրութեան, ամէնքին էլ շատ գործ կայ կատարելու, եւ ամէնքն էլ պէտք է աշխատեն միեւնոյն նպատակի համար» (Բուդաղեան, 1901): Բարեգործության՝ որպես պետական կառավարչական գործունեությանը նպաստող հասարակական նախաձեռնություն և օժանդակություն ներկայացնելը ցույց է տալիս նաև, որ պետական քաղաքականությունը ոչ միայն խրախուսում, այլև նպաստում էր սոցիալական պատասխանատվության գաղափարի իրականացմանը՝ «նպաստում կառավարչական ձեռնարկութիւններին, որ լիապէս ու բազմակողմանի կերպով կատարեն կարօտ ազգաբնակութեան օգնելու գործը» (Բուդաղեան, 1901): «Գիտակցությամբ և յոժարակամ» (Նոր-Դար, 1892, N 196) բարեգործության այս հայեցակարգը հիմք էր հանդիսանում 19-րդ դարավերջի հայ հասարակական-մշակութային կյանքում բարեգործական նախաձեռնությունների էթիկական գնահատման համար՝ այն տարբերելով ինչպես անմտածված ողորմությունից, այնպես էլ ցուցադրական հովանավորությունից:

Արևելահայերի շրջանում բարեգործական կազմակերպության ձևավորման շուրջ, Լեոյի բնորոշմամբ, 1860-ական թվականների սկզբում սկսվում է «այդ հասկացողության յեղաշրջում» (Լէօ, 1911): Բազմագործառույթ և հետաքրքրությունների ընդարձակ շրջանակ հետապնդող կազմակերպություն հիմնադրելու գաղափարը դառնում է արևելահայ հասարակական մտքի գերակայող ուղղություն: Այս գաղափարի արծարծող հանդիսացավ Մոսկվայում հրատարակվող «Հիւսիսափայլ» հրապարակախոսական ամսագիրը, որի խմբագիր Ստեփանոս Նազարյանն իր խմբագրականներում արծարծում էր կազմակերպված ընկերության միջոցով հայության կրթական-կուլտուրական գործերը առաջնորդելու գաղափարը: Ըստ Ս.Նազարյանի՝ «հայկական ընկերութեան առաջին պաշտօնը և հոգատարութիւնը կը լինի Հայոց ազգի չքաւոր զաւակներին Ռուսաստանի մէջ

պատուաւոր հացի և ապրուստի ճանապարհ բանալ, ծանօթացնելով նրանց ձեռագործ արուեստների, երկրագործութեան, բնութեան բերքերի յառաջածութեան և դոցանից վաճառելի ապրանքի պատրաստութեան կերպի և եղանակի հետ, այլ և կրթելով Հայոց զաւակներից պօլիտեխնիկոսք, հմուտ վաճառականք, հաշուետների մէջ յաջողակ գործակատարք և գրապահք» (Նազարեան, 1913):

Ստեփանոս Նազարյանին իր՝ «Առաջարկություն՝ մի ընդհանուր հայկական ընկերութեան Ռուսաստանի մէջ, վանս բարեկարգելու հայերի նիւթական եւ բարոյական կեանքը» հոդվածում նշում է նաև ձևավորվող կազմակերպության հիմնական նպատակը, որն էր «փակել աղքատութեան և մերկութեան ճանապարհը, դաստիարակելով և ուսուցանելով ժողովրդի չքաւոր զաւակները. դաստիարակութիւնը և ուսումը կը պատրաստէ նոցա մի ոսկի ապագայք» (Նազարեան, 1913):

Եթե ընդհանրացնենք արևելահայ հասարակական մտքում բարեգործական առաքելության շուրջ պատկերացումներն ու ըմբռնումները, տեղին է հիշատակել Ալեքսանդր Երիցյանի եզրակացությունը «Արձագանք» թերթում 1882 թվականին տպագրված իր հոդվածում. «Միայնակ եզրակացութիւնը, որ պիտի անեմ՝ այդ այն է, որ ի նկատի ունենալով մեր ազգի դրութիւնը և պահանջները՝ միայն առատաձեռն և խոհեմ բարեգործութիւնը կարող է նորան ազատել խաւարից ու առաջնորդել դէպի լոյսը» (Արձագանք, 1882, N 17): Այս խոսքերն ամփոփում են այն ժամանակվա հայ մտավորականության համոզմունքը, որ բարեգործությունը ոչ թե զուտ ողորմություն, հոգու պարտք է, այլ ազգային զարգացման ռազմավարական գործիք: Միաժամանակ, Երիցյանի «առատաձեռն և խոհեմ» բարեգործության պահանջը, Բուրդիեի տեսանկյունից, խորհրդանշական կապիտալի ռացիոնալ կառավարման ռազմավարություն էր. «առատաձեռնությունը» ապահովում էր, որ բարեգործությունը «նկատելի» լինի և արժանանա ճանաչման, իսկ «խոհեմությունը», որ այն ուղղված լինի այնպիսի նախագծերի (դպրոցներ, տպարաններ, աղքատախնամ կազմակերպություններ), որոնք ապահովում են խորհրդանշական կապիտալի «երկարաժամկետ» կուտակում:

Առաջին նմանօրինակ նախաձեռնություն դրսևորեց բժիշկ Դավիթ Ռոստոմյանցը՝ Բաքվում հիմնադրելով «Հայոց մարդասիրական ընկերությունը» (1864թ.), որի նպատակն էր «տարածել լուսաւորութիւն և բարեգործութիւն ռուսահայերի մէջ առանց զանազանելու նոցա կոչումն ու դաւանութիւնը» (Գալստեանց, 1891): Չնայած այս ընկերության ունեցած բավականին խոշոր դրամագլխիկ, կազմակերպական կայուն վարչությանը և գործունեության ոլորտայնությանը, այն ևս տեղային նշանակություն ուներ՝ գործունեություն ծավալելով և նպաստելով Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների հայության խնդիրների և կարիքների լուծմանը:

Արևելահայության միջավայրում հայանպաստ կազմակերպությունների և միությունների հիմնադրման և ձևավորման համար, ըստ Լեոյի, 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի հետո ազգային հարցը (ի մասնավորի Հայկական հարցի միջազգայնացումը) «ոչ միայն քաղաքական մեծ նշանակութիւն ստացաւ, այլ և ուժեղ կուլտուրական շարժումների պատճառ հանդիսացաւ» (Լէօ, 1911):

19-րդ դարի երրորդ քառորդի վերջին տարիներին իրապես փոխվեց արևելահայության հասարակական-քաղաքական կյանքը՝ զարկ տալով կրթա-մշակութային զարգացմանը: Այս ժամանակաշրջանում էր, որ Թիֆլիսում հիմնադրվեցին մի քանի բարեգործական ընկերություններ՝ Կովկասի հայոց հրատարակչական ընկերությունը, 1881 թվականին Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը և 1882-ին՝ Թիֆլիսի Հայուհեաց բարեգործական ընկերությունը (Լէօ, 1911): Կովկասի Հայոց բարեգործական ընկերության հիմնադրման գաղափարը և նպատակը աջակցության և համակրության արժանացավ թե հասարակության և թե տեղական իշխանությունների կողմից (Кавказ, 1881, N 227):

Ընկերության անդրանիկ կանոնադրությունը, որը հավանաբար կազմվել է Գաբրիել Սունդուկյանի կողմից, լիովին համապատասխանում է Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության պատմական առաքելությանը և գործունեությանը (Բեհբուդեան, 1987): Այն ոչ միայն ամրագրում էր ընկերության նպատակներն ու գործունեության շրջանակը, այլև արտացոլում էր 19-րդ դարի վերջի հայ իրականությունը և իշխանությունների հետ հարաբերությունների բարդությունները: Որպես նպատակ էր հռչակվում՝ «նպաստել լուսաւորութեան տարածմանը հայերի մէջ Կովկասում և Անդրկովկասում և օգնել նոցա նիւթականապէս» (Լէօ, 1911): Նպատակին հասնելու համար նախատեսվում էր՝ զարկ տալ կրթական գործին՝ պահպանելով առկա և հիմնել նոր ուսումնարաններ, օժանդակել արհեստների տարածմանը, օգնել ուսանողներին, հրատարակել գրքեր և պարբերականներ, հիմնել տպարաններ և գրադարան-ընթերցարաններ, ինչպես նաև հիմնել բարեգործական հաստատություններ, նպաստել աղետների, համաճարակների ժամանակ ժողովրդական զանգվածների շտապօգնությանը՝ անհրաժեշտ դեպքերում կազմակերպելով հատուկ մասնախմբեր (Լէօ, 1911):

Կովկասի հայոց բարեգործական ընկերության կանոնադրական առանձնահատկությունների, անդամության և վարչական մարմնի գործունեության առանձին հարցերի ուսումնասիրությունը դիտարկելով առանձին հետազոտության առարկա, հարկ ենք համարում ընդգծել, որ այս կազմակերպության և նրա ճյուղային ցանցի ձևավորումը հնարավորություն է տալիս լավագույնս պատկերացնել կազմակերպված հայկական բարեգործության մեխանիզմները, մասշտաբները և սոցիալ-ազգային նշանակությունը:

Հայոց բարեգործական ավանդույթի պատմական վերլուծությունը ցույց է տալիս մի քանի հստակ զարգացման-փոխակերպման փուլեր՝ միջնադարյան եկեղեցա-կենտրոն, անհատական-առաքինական բարեգործությունից, 16-18-րդ դարերի սփյուռքահայ առևտրական ցանցերի համայնքային աջակցության միջոցով, դեպի 19-րդ դարավերջի կազմակերպված, կանոնադրական հիմքի վրա գործող ընկերությունների մոդել, որի ամենավառ և ամենալավ փաստագրված օրինակը Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերությունն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայոց բարեգործական ավանդույթներն անցել են չորս հիմնական փուլ՝ վաղ միջնադարյան եկեղեցակենտրոն բարեգործություն, զարգացած միջնադարյան անհատական-առաքինական բարեգործություն, 16-18-րդ դարերի գաղթահայ վաճառականության եկեղեցանպաստ և կրթագիտական հովանավորչություն, և 19-րդ դարի ինստիտուցիոնալացված ընկերություններ, որոնց վառ օրինակը Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունն է:

Բարեգործությունը միաժամանակ ծառայել է որպես ազգային համերաշխության, փոխօգնության և մշակութային ինքնության ամրապնդման մեխանիզմ, և որպես տնտեսական կապիտալի վերածման գործիք խորհրդանշական կապիտալի՝ ամրապնդելով բարերարների սոցիալական գերակայությունը և վերարտադրելով սոցիալական հիերարխիան:

Բուրդիեի «խորհրդանշական կապիտալի» տեսության կիրառումը ցույց է տալիս, որ հայոց բարեգործությունը ոչ միայն եղել զուտ «անշահախնդիր» իդեալ, այլև իրականացվել է իշխանության, ռեսուրսների և սոցիալական ազդեցության վերարտադրման համատեքստում՝ միաժամանակ նպաստելով հայ կրթական և մշակութային միջավայրի զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արձագանք, 1882, N 17.

Բեհբուդյան, Ս. (1987). Հայոց առաջին Բարեգործական Ընկերությունը, Էջմիածին, Թ-Ժ.

Բուդուղեան, Ա. (1901). Կարիք և բարեգործութիւն, Նոր-Նախիջեւան, տպարան եղբ Յ.Ս.Աւագեանների.

Գալստեանց, Ա. (1891). Պատմական համառօտ տեսութիւն Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունեութեան, Բագու.

Դիվան հայ վիմագրության, պրակ 6, 1977. Երևան, ՀՍՍՀ ԳԱ.

Լեո (1934). Խոջայական կապիտալ, Դրվագներ հայ կղերական դիվանագիտության պատմությունից, Հատոր առաջին, Յերեվան.

Լէօ (1911). Երեսնամեակ Հայոց Բարեգործական Ընկերութեան Կովկասում (1881-

1911), Թիֆլիս, Տպարան Մն. Մարտիրոսեանցի.

Կիրակոս Գանձակեցի (1982). Հայոց պատմություն, Երևան, Սովետական գրող.

Նոր-Դար, 1892, N 196.

Ստեփաննոս Նազարեանի երկերը կենսագրական ակնարկով, հատոր I. (1913). Թիֆլիս, Տպարան Ն. Աղանեանի.

Кавказ, 1881, N 227. https://dspace.nplg.gov.ge/handle/1234/304905

Шагиданова, К. И. (2007). Благотворительная деятельность бакинских армян, Вестник общественных наук, N 1, с. 156-163.

Bourdieu, P. (1986). The Forms of Capital, in: Richardson J.G. (ed.), Handbook of Theory and Research for the Sociology of Education, New York, Greenwood Press, pp. 241-258.

Bourdieu, P. (1984). Distinction: A Social Critique of the Judgement of Taste, Harvard University Press.

Putnam, R.D. (2000). *Bowling alone: The collapse and revival of American community*. Touchstone Books/Simon & Schuster.

REFERENCE LIST

Ardzagang, 1882. *(Ardzagang)*. № 17.

Bekhbudyan, S. (1987). Pervoe armyanskoe blagotvoritel'noe obshchestvo *(The First Armenian Charitable Society)*. Echmiadzin, T-ZH.

Bourdieu, P. (1986). The Forms of Capital, in: Richardson J.G. (ed.), Handbook of Theory and Research for the Sociology of Education, New York, Greenwood Press, pp. 241-258.

Bourdieu, P. (1984). Distinction: A Social Critique of the Judgement of Taste, Harvard University Press.

Budugyan, A. (1901). Nuzhda i blagotvoritel'nost' *(Need and Charity)*. Nor-Nahichevan, izdatel'stvo brat'ev YA.S. Avagyan.

Divan armyanskoj litografii (1977). *(Divan of Armenian Lithography)*. vypusk 6, Erevan, Akademiya nauk Armyanskoj SSR.

Galstyans, A. (1891). Kratkij istoricheskij obzor 25-letnej deyatel'nosti Armyanskogo gumanitarnogo obshchestva Baku *(A Brief Historical Overview of the 25-Year Activities of the Armenian Humanitarian Society of Baku)*. Baku.

Kavkaz (1881). *(The Caucasus)*. N 227. https://dspace.nplg.gov.ge/handle/1234/304905

Kiragos Gandzakecki (1982). Istoriya Armenii *(Armenian History)*. Erevan, sovetskij pisatel'.

Leo (1934). Hodzhaly, stolica, epizody iz istorii armyanskoj duhovnoj diplomatii *(Khojaly,*

the capital, episodes from the history of Armenian spiritual diplomacy). tom pervyj, Erevan.

Leo (1911). Tridcat' let Armyanskogo blagotvoritel'nogo obshchestva na Kavkaze *(Thirty Years of the Armenian Benevolent Society in the Caucasus)*. (1881-1911), Tbilisi, Mn. Izdatel'stvo Martirosyana.

Nor-Dar, 1892 *(New Century)*. № 196.

Proizvedeniya Stepannosa Nazaryana s biograficheskim ocherkom (1913). *(Works of Stepanos Nazaryan, with a biographical sketch)*. tom I. Tbilisi, Izdatel'stvo N. Aganyana.

Putnam, R.D. (2000). *Bowling alone: The collapse and revival of American community*. Touchstone Books/Simon & Schuster.

Šagidanova, K. I. (2007). Blagotvoritel′naâ deâtel′nost′ bakinskih armân *(Philanthropic activities of the Armenians of Baku)*. Vestnik obŝestvennyh nauk, N 1, c. 156-163.

РЕЗЮМЕ

АРМЯНСКИЕ БЛАГОТВОРИТЕЛЬНЫЕ ТРАДИЦИИ И ИХ МОТИВЫ

Владимир Погосян

В статье рассматриваются формирование и развитие армянских благотворительных традиций от Средневековья до конца XIX века в рамках объединённого подхода теорий «символического капитала» Пьера Бурдьё и «социального капитала» Роберта Патнэма. В качестве приоритета рассматриваются особенности институционализации благотворительности и мотивы перехода к организационным структурам. Цель — выявить этапы развития благотворительности, её мотивы и двойственную функцию: с одной стороны, укрепление национальной солидарности, с другой — воспроизводство социальной дифференциации.

Исследование показывает, что армянские благотворительные традиции прошли четыре основных этапа: раннесредневековая церковно-центричная благотворительность, развитая средневековая индивидуально-добродетельная благотворительность, церковное покровительство и образовательное меценатство армянского купечества диаспоры XVI–XVIII веков и институционализированные организации XIX века (Кавказское армянское благотворительное общество и другие). Благотворительность одновременно служила инструментом национальной мобилизации в условиях отсутствия государственности и механизмом превращения экономического капитала в символический капитал, укрепляя социальную роль благотворителей.

Результаты исследования показывают, что благотворительность у армян была не только чисто бескорыстным идеалом, но действовала в контексте воспроизводства власти, ресурсов и социального влияния, одновременно способствуя развитию армянской образовательной и культурной среды.

Ключевые слова: *Кавказское армянское благотворительное общество, благотворительность, символический капитал, национальная идентичность, армянское купечество, армянская диаспора, институционализация.*

SUMMARY

ARMENIAN CHARITABLE TRADITIONS AND THEIR MOTIVES

Vladimir Poghosyan

The article examines the formation and development of Armenian charitable traditions from the Middle Ages to the end of the 19th century within the combined framework of Pierre Bourdieu's "symbolic capital" and Robert Putnam's "social capital" theories. Priority is given to the characteristics of the institutionalization of charity and the motives for the transition to organizational structures. The aim is to reveal the stages of charitable development, their motives, and the dual function of charity: on the one hand, strengthening national solidarity, and on the other, reproducing social differentiation.

The study shows that Armenian charitable traditions passed through four main stages: early medieval church-centered charity, developed medieval individual-virtuous charity, church patronage and educational sponsorship of the 16th-18th century diasporic Armenian merchantry, and the institutionalized organizations of the 19th century (the Armenian Charitable Society of the Caucasus and others). Charity simultaneously served as an instrument of national mobilization in the absence of statehood and as a mechanism for converting economic capital into symbolic capital, thereby reinforcing the social role of benefactors.

The research findings demonstrate that charity among Armenians was not merely a purely disinterested ideal, but operated within the context of reproducing power, resources, and social influence, while simultaneously contributing to the development of the Armenian educational and cultural environment.

Keywords: *Armenian Charitable Society of the Caucasus, charity, symbolic capital, national identity, Armenian merchantry, diasporic Armenians, institutionalization.*

Հոդվածը սպացվել է՝ 19.08.2026
Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 20.08.2026
Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 29.09.2026